ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հունվարի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանը: Սուրբ Պատարագի ընթացքում կատարվեց հոգեհանգստյան հատուկ արարողություն՝ Հեռավոր Արևելքում ահավոր արհավիրքից զոհվածների հոգիների հանգստության համար:

Սրբազան արարողությունից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: Սրբազան Հայրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ողջ եկեղեցական դասի և բարեպաշտ ժողովրդի անունից ցավակցական խոսք ուղղեց Հեռավոր Արևելքում բնական աղետի պատճառով տուժածների հարազատներին և աղոթեց անմեղ զոհերի հոգիների խաղաղության և հանգստության համար (տե՛ս էջ 43):

Փառեն Սրբազանը հպարտությամբ շեշտեց, որ ինչպես Հայաստանի Հանրապետությունը, այնպես էլ աշխարհասփյուռ հայությունն իր հոգեկան և նյութական աջակցությունն են ցույց տվել տուժածներին:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ ԱԳ փոխնախարար Արմեն Բայբուրդյանը, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ ու դիվանագետներ, մշակույթի գործիչներ և բազմաթիվ հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ